«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Հրաչի Միրոյան

Ուսումնական հաստատություն՝ << ՀՀ Արարատի մարզի Վերին
Արտաշատի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

Թեմա՝ Բարոյական արժեքներ

Հարց՝ Ինչպիսի՞ բարոյական արժեքներ են կարևորվում սովորողների շրջանում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……4
Գլուխ 1 . Բարոյական արժեքներ……7
Գլուխ 2. Բարոյական արժեքների ձևավորումը կրթության պայմաններում……...11
Սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծություն և ամփոփում..15
Եզրակացություն……...17
Օգտագործված գրականության ցանկ……21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր անհատ ծնվում է առանց գիտելիքների և բարոյական կամ դրան հակառակ՝ ոչ բարոյական հակումների:

Հետագա դաստիարակության, գաղափարների ընկալման ժամանակ արդեն ձևավորվում են համապատասխան հակումներ:

Հնում փիլիսոփաները վիճում էին հետևյալ հարցի շուրջ՝ առաքինությունը բնածին է, թե ձեռքբերովի: Օրինակ բժշկություն իմացող մարդը բժիշկ է, բայց արդարության մասին իմացող մարդը կարող է և արդար չլինել: Ուստի միայն իմացությունը բավարար չէ, անհրաժեշտ է միջավայր, որը և երեխայի գիտակցության մեջ կապահովի բարոյական նորմերի ներարկման գործընթացը:Իսկ որտե՞ղ պետք է ձևավորվեն այդ արժեքները՝ ընտանիքու՞մ, շրջապատու՞մ, եկեղեցու՞մ, դպրոցու՞մ, թե ինքնակրթությամբ: Կարևորելով բոլոր այս օղակները, այնուամենայնիվ, երեխայի բարոյական նկարագրի ձևավորման պատասխանատուն շարունակում է մնալ հանրակրթական դպրոցը:

Փաստենք, որ սովորողների բարոյական դաստիարակության իրականացումը միշտ էլ եղել և մնում է կրթական ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկը:

Հարկ է նշել, որ հանրակրթական պետական կրթակարգում և հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչներում որոշակի ուշադրություն է դարձվում բարոյական արժեքներին:

Բարոյական դաստիարակությունը պետք է իրականացնել ոչ թե սովորողի վարքի մեջ այս կամ այն շեղումը նկատելիս համապատասխան <<ցուցումներ>> տալով, այլ յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման ընթացում դաստիարակության բովանդակությունը կազմող արժեքների հետևողական ձևավորման միջոցով:

Նկատելի է, որ հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկա ունի բարոյական արժեքների ձևավորման համար անհրաժեշտ կրթական ներուժ:Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է լինի բարոյական արժեհամակարգի ձևավորումը:

Կրթական ոլորտը պետք է լինի այն օրինակելի տարածքը, ուր հաստատուն են բարոյական նորմերը և որտեղ աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:
Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկը սովորողի մեջ իր ազգային հոգեկերտվածքին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների սերմանումն է:
Այդուհանդերձ, երեխան նախ մեծանում է ընտանիքում, որտեղ առաջինը տեսնում է ծնողների վարվելաձևը, զգում նրանց արժեհամակարգը: Ընտանիքը ևս եկեղեցի է, և այդ եկեղեցու քահանան ընտանիքի մայրն է:
Դպրոցում հաճախ տրվում են միայն գիտելիքներ ու իմացություն, սակայն այստեղ էլ կարևոր է ուսուցչի կերպարը, ով նրանցում կարող է ամրապնդել հոգևոր-բարոյական արժեքներ, կերտել աստվածահաճո դիմագիծ:
Այժմ փորձենք հասկանալ, թե ինչպես է իրականացվում բարոյական արժեքների ձևավորումը կրթության պայմաններում:
Հետազոտական աշխատանքի ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդները՝ դիտում, հետազոտում, հավաքագրում,սոցոլոգիական հարցում :
Հետազոտության նպատակն է .

1. Փորձել բացահայտել ո՞վ կամ ի՞նչը կարող է նպաստել սովորողի բարոյական նկարագրի ձևավորմանը
2. Պարզել՝ որքանով է այլ երկրներում կարևորվում անձի բարոյական դաստիարակության հիմնախնդիրը, անցկացնել համեմատականներ
3. Կատարել սոցոլոգիական հարցում, դրա արդյունքների հիման վրա գնահատել բարոյական արժեքներն ըստ կարևորության

Խաչվող հասկացություններ՝

1. Օրինաչափություններ
2. Տարածություն և ժամանակ
3. Գեղագիտություն և բարոյականություն
4. Պատմություն և բարոյականություն

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները

1.Մանկավարժություն
2. Հոգեբանություն
3. Կրոն
4. Պատմություն
5. Փիլիսոփայություն

Գլուխ 1

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչի՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների :

Բարոյական արժեհամակարգը նախատեսում է,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝ լինի

1) հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,

2) կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք:

3) Ունենա ազգային ինքնագիտակցություն և արժանապատվություն

4) Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

5) Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,

6) Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,

7) Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:

8) Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:

Բարոյական սկզբունքներն ու նորմերը ծառայում են իբրև մարդկանց վարքի և փոխհարաբերությունների կարգավորիչ, դրա հետ մեկտեղ որոշում վերաբերմունքը շրջապատի, գործունեության ձևերի, նպատակների և արդյունքների նկատմամբ:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական,դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում ,այլ գիտելիքների ու կարողությունների ,արժեքային որակների, կամքի ,բնավորության ,զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային,էքսկուրսիա ,դասղեկական ժամ , արտադասարանական միջոցառումներ և այլն)առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները , միասին ձեռք բերել

հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն:

Յուրաքանչյուր մարդու մեջ կա բարոյականության ծիլը, մնում է այն գտնել և աճեցնել: Բարոյականությունը ներարկվում է մարդու աշխարհայացքի մեջ գիտության, գիտելիքի միջոցով:

Բարոյականությունը մարդկային վարվելակերպի, վարվեցողության և դրանց առնչվող հակասությունների համակարգ է, որն աշխարհիկ ընկալումով պետք է ընդունելի և գովելի համարվի հասարակության կողմից: Հասարակությունն է սահմանում բարոյական նորմերը, ապա տարբեր հասարակությունների պարագայում բարոյականության հասկացություններն ու վարվելաձևերը կարող են արմատականորեն տարբերվել և նույնիսկ հակասությունն ակնհայտ է արևմտյան և արևելյան հասարակությունների բարոյական ընկալումներում և վարվելակերպի մեջ:

Դպրոցականի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումը կախված են տվյալ երկրի սոցիալական պայմաններից, այն հանրությունից ,որում նա ապրում է, գործում է: Եթե դրանք իրենց բարձրության վրա չեն գտնվում, եթե չկան նյութական բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ, քաղաքական առողջ մթնոլորտ, քաղաքակրթություն, ապա այնտեղ անձի բարոյականությունն ու բարոյական զարգացումը կայուն լինել չեն կարող :Ինչպես բարոյական վարքի սովորույթների դաստիարակումը , այնպես էլ բարոյական գիտակցման ձևավորումը բարդ գործընթաց է, և ձեռք է բերվում մի շարք մեթոդների օգտագործումով : Դրանց միջոցով է ուսուցիչը հասնում այն բանին, որ երեխաները գիտելիքներ յուրացնեն բարոյականության և նրա կանոնների մասին , նրանց մեջ ձևավորվի բարոյական պատկերացումների, հասկացությունների և արժեքների համակարգը:

Բարոյական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ : Դրանք կարելի է բաժանել երկու խմբի. առաջին խմբի մեջ են դասվում անձի գիտակցության, զգացմունքների ու վարքի ձևավորումը, երկրորդ խմբի մեջ են մտնում բարոյական բարձր որակները՝հայրենասիրություն, գիտակցական կարգապահություն, քաղաքացիական դաստիարակություն և այլն : Հմուտ ուսուցիչը պետք է բարոյական դաստիարակության ուղիներ որոնի , աշակերտների մեջ ձևավորի բարոյական հասկացությունները ճիշտ ըմբռնելու կարողությունները: Նա իր օրինակով պետք է բարություն և համեստություն սերմանի:

Մեզանից պահանջվում է , որ յուրաքանչյուր դասի ընթացում թեման ներկայացնեն այնպես , որ սովորողը գիտակցի բարոյական այն արժեքները,որ հարիր են մեր ազգին: Ինչպես արդեն վերը նշված օրինակներով, նյութերով ու նմանատիպ պատմություններով ներկայացնել մարդուն , ով ունի խիղճ , լսում է խղճին և դրա թելադրանքով է շարժվում և գործում : Տարբեր օրինակներով համոզել երեխային , որ բարոյականությունը մեծ ուժ է , որը ետ է պահում մարդուն անբարո քայլերից :

Դեռահաս տարիքի հոգեկան զարգացման կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ այդ ժամանակ տեղի են ունենում բարոյական գիտակցության աճ՝ մարդը ձևավորվում է որպես անհատ: Գիտելիքները վերածվում են համոզմունքների, ձևավորվում են աշխարհայցքը և մարդկանց նկատմամբ վերաբերմունքի համակարգը:

Գլուխ 2

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մարդու վարքը, գործունեությունը, և կեցությունը մեծապես պայմանավորված են նրա նախընտրած արժեքներով, արժեքային կողմնորոշմամբ:

Բարոյական արժեքների ձևավորումը սկսվում է երեխայի ծնվելու հետ միաժամանակ և իրականացվում նրա ողջ կյանքի ընթացքում: Այդ գործընթացին մասնակցում են ընտանիքը, միջավայրը, եկեղեցին և իհարկե երեխաների դաստիարակության հիմնական օղակը՝ հանրակրթական դպրոցը: Կրթության պայմաններում բարոյական արժեքները սովորողներին ներկայացվում են առաջին հերթին գրական, պատմական հերոսների օրինակով, ինչպես նաև ուսուցչի վարքագծով, ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը ևս:

Գեղարվեստական կերպարները օժտված են հուզական ներգործության առավելագույն դրսևորումով: Այն նպատակաուղղված է հուզական արձագանքը որպես բարոյական արժեք դիտարկելուն:Հուզական զգայունակությունը, կարեկցանքը, ապրումակցումը անձի նկատմամբ գթասրտության դրսևորումներն են, որն արտահայտվում է այլոց դժբախտության և խնդիրների նկատմամբ զգայուն վերաբերմունքի միջոցով: Բարոյական արժեքների ,բարոյական պատկերացումների ձևավորման հնարավորություն է ընձեռում կրթական գործընթացում կիրառվող խաղային մեթոդը, որի միջոցով ի հայտ է գալիս

համագործակցության և փոխօգնության իրական արժեքը: Խաղի ընթացքում տիրապետող է զգայական այնպիսի մթնոլորտ, որը նպաստում է սովորողի ապրումակցային խառնվածքի, այն է՝ուշադրության, հոգատարության, պատրաստակամության , բարյացկամության, արդարամտության ձևավորմանը: Այս ամենը միավորվում են <<բարություն>> հասկացության մեջ:

Այս առումով էապես կարևորվում են բարոյական հետևյալ հասկացությունների բովանդակային բացահայտումները և պարզաբանումները.

պատրաստակամություն՝դիմացինի հետ ուրախության և տխրության պահեր վերապրելու կարողություն

ուշադրություն ՝ տագնապները նկատելու և հասկանալու կարողություն

հոգատարություն՝դիմացինին օգնելու կարողություն

արդարություն՝ հավասար իրավունքների փաստն ընդունելու կարողություն

Իսկ ինչպե՞ս սովորողի մեջ զարգացնել բարոյական հստակ չափանիշներ.

ա) գործածել բարոյական հասկացություններ արտահայտող բառեր, օրինակ՝ աշակերտների հետ խոսել առօրյա տարբեր իրավիճակների մասին և ցույց տալ հակադրությունները՝ օգտագործելով բարոյական հասկացություններ արտահայտող բառեր՝ սա ազնվություն է, իսկ սա՝ անազնվություն, սա հավատարմության դրսևորում է, իսկ սա՝ անհավատարմության, սա բարի վերաբերմունք է, իսկ սա՝ անբարյացակամ:

Ժամանակի ընթացքում երեխան կկարողանա հստակ տեսնել բարոյական հասկացությունների կապը կոնկրետ արարքների հետ

բ) հիմնավորել Ձեր՝ որպես մանկավարժի մատուցած չափանիշները, օրինակ՝ կատարել այսպիսի հարցադրումներ՝ ինչու՞ է ազնիվ լինելը լավագույն տարբերակը, ինչու՞ է ստելը սպառնում փոխհարաբերություններին, անհրաժեշտ է օգնել աշակերտին գործի դնել իր դատողությունն ու ձևավորվող խիղճը:

Վերջին շրջանում զգալիորենմեծացել է սովորողների բարոյական արժեքների ձևավորման , բարոյական դաստիարակության խնդրի նկատմամբ ուշադրությունը, կատարվում են գիտական հետազոտություններ, կրթօջախների ուսումնական պլաններում ներառվում են բարոյագիտական բնույթի ուսումնական դասընթացներ:

Փորձենք անդրադառնալ տարբեր երկների ՝ բարոյական արժեքների ձևավորմանն ուղղված քայլերի պարզաբանմանը. Անգլիայի ազգային կրթակարգը սովորողների հոգևոր , մշակութային, ֆիզիկական և մտավոր զարգացմանը զուգընթաց նախատեսում է նաև բարոյական այնպիսի արժեքների նպատակաուղղված ձևավորում, ինչպիսիք են ճշմարտությունը, արդարությունը, ազնվությունը, պարտքի զգացումը:

Բացի այդ սովորողների բարոյական և հոգևոր ներաշխարհի ձևավորմանն է նպաստում <<Կրոնական կրթություն >> ուսումնական առարկան:

Շոտլանդիայում պարտադիր է <<Կրոնական և բարոյական կրթություն>> ուսումնական առարկան և առարկայական չափանիշներով հիմնական խնդիրների շարքում նախատեսվում են նաև սովորողների կարեկցանքի, իմաստության, արդարության և ազնվության մասին գիտելիքների խորացումը և բարոյական այդ արժեքների ձևավորումը:

Ռուսաստանի Դաշնությունում պետական կրթակարգը ուղղված է սովորողների հոգևոր-բարոյական զարգացմանը, Ռուսաստանի ժողովուրդների հոգևոր-մշակութային արժեքների ճանաչմանը:Ռուս

մանկավարժներից շատերը մեծ նշանակություն են տալիս նաև մաթեմատիկայի միջոցով սովորողների բարոյական դաստիարակությանը:

Այսպիսով այդ երկրներում կարևորվում են անձի բարոյական դաստիարակությունը և դրա համար կատարվում հստակ աշխատանքներ, մասնավորապես, բարոյագիտական որևէ առարկայի ուսուցում, այդ առարկաների համար ուղեցույցների պատրաստում, որոնք ուսուցչին հնարավորություն կտան առավել արդյունավետ իրականացնել առարկայի դասավանդումը, ինչպես նաև ուսումնական այլ առարկաների միջոցով բարոյական արժեքների ձևավորումը:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հետազոտական աշխատանքի շրջանակներում դեռահասների շրջանում անցկացվել է սոցիոլոգիական հարցում, որի նպատակն էր պարզել բարոյական արժեքների և դատապարտելի հատկանիշների կարևորության աստիճանը:

Հետազոտությունը անանուն է, տվյալները ներկայացված են ընդհանրացված տարբերակով.



1	Անշահախնդրություն	12
2	Կամեցողություն	7
3	Առաքինություն	11
4	Հանդուրժողականություն	13
5	Գթասրտություն	6



1	Հպարտություն	13
2	Անտարբերություն	6
3	Նախանձ	16
4	Երախտամոռություն	9
5	Ցանկասիրություն	5

Նախ նշեմ, որ դառահասները հարցմանը մասնակցում էին մեծ հաճույքով ու պատրաստակամությամբ: Հետազոտության նպատակից ելնելով փորձեցի պարզել, թե դեռահասներից յուրաքանչյուրը ո՞ր բարոյական արժեքն է առավել կարևորում, կամ ո՞ր հատկանիշն է ամենից դատապարտելին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է կարևոր նշանակություն ունեցող թեմա ,քանզի խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին:

Մասնագիտական գրականության մանրամասն ուսումնասիրությունից և իմ կողմից կատարված հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ

1. Դեռահասների միջավայրում կան <<կառույցներ>>, որոնք իրենց հետքն են թողնում նրանցից յուրաքանչյուրի բարոյական դիմագծի ձևավորման գործում:
   Ընտանիքը անձի բարոյական կերպարի ձևավորման գործում կարևորագույն ինստիտուտ է:Որոշակի ժամանակահատվածում ընտանիքը հանդես է գալիս որպես երեխայի միակ միջավայր, որտեղ նա ձեռք է բերում որոշակի փորձառություն: Ընտանիքի դերը առաջնային է, քանի որ ընտանիքն է պատասխանատվություն կրում երեխայի հիմնարար իրավունքների պաշտպանության, նրա բարոյական կերպարի ձևավորման գործում:
   Եթե երեխան մեծանա եկեղեցի հաճախելով, մենք կունենաք աստվածավախ անձնավորություններ, որոնք նվիրված կլինեն իրենց հայրենիքին, Աստծուն և ընտանիքին, այն է՝կձևավորվեն որպես բարոյապես առողջ անհատներ: Դեռահասների մեջ բարոյական արժեքների ամրապնդման գործում մեծ դեր ունի Սուրբ Գրքի ընթերցանությունը ևս, որը հոգևոր շահ է բերում նրանց, փոխակերպում և դարձնում առավել առաքինի:
   Ուսուցիչը, սկսած տարրական դասարանից,անմիջական ազդեցություն ունի երեխայի դաստիարակության,բարոյական արժեքների ձևավորման գործում:Նա պարտավոր է լրացնել ընտանիքի կամ ծնողի կրթվածության մակարդակի բացը:
2. Զուգահեռներ անցկացնելով այլ երկրների և ՀՀ-ում գործող կրթական նորմերի միջև հարկ է նշել, որ ՀՀ-ում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ հանրակրթական պատական չափորոշչում՝որպես կրթության բովանդակային բաղադրիչ, սակայն մեր հանրապետության

կրթական համակարգում բարոյագիտության վերաբերյալ պարտադիր ուսումնական առարկա նախատեսված չէ:Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը՝ դպրոցն ու ծնողը փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին ավանդաբար :

3. Սոցիոլոգիական հարցման վերլուծությունից պարզ է դառնում, որ դեռահասության հասած անհատն առավել կարևորում է այնպիսի հատկանիշներ ինչպիսիք են՝

   ա)հանդուրժողականությունը.մենք մեր կյանքում հաճախ ենք ներգրավվում անիմաստ ու երկարաձգված բախումների մեջ, սակայն ինքներս էլ չենք նկատում, որ այն հոգեկան էներգիան, որ ծախսում ենք ատելության ու չարության վրա, ուղղակի կորցնում ենք, իսկ կարող էինք ծախսել մեր ինքնակատարելագործման ու ստեղծագործական աշխատանքի համար: Ամենից հաճախ այդ մարդիկ ունեն մեկ անգնահատելի հատկանիշ՝ նրանք հանդուրժող են:Հանդուրժողություն նշանակում է համբերատարություն, ներողամտություն, զիջողություն, բարեհաճություն, ողորմածություն: Այս երևույթը առողջ հասարակության մեջ մարդկային հարաբերություններում ապահովում է փոխզիջում, փոխօգնություն, սրտացավություն, հոգատար վերաբերմունք՝ օգնելու համար միմյանց ավելի կատարելագործվել. «Արդ, աղաչում եմ ձեզ, ես՝ Տիրոջ համար բանտարկվածս, որ ընթանաք այնպես, ինչպես վայել է այն կոչմանը, որին կոչվեցիք. կատարյալ խոնարհությամբ, հեզությամբ եւ համբերությամբ հանդուրժեցե՛ք միմյանց սիրով, ջանացե՛ք պահել հոգու միությունը խաղաղության կապով. մե՛կ մարմին եւ մե՛կ հոգի, ինչպես որ մե՛կ է ձեր հույսը, որին Աստված կոչեց մեզ»:

բ)անշահախնդրությունը. շահախնդրություն նշանակում է մարդու հետ շփում անձնական շահը բավարարելու համար, իսկ այդ հարաբերությունները կեղծ են, հետևաբար՝ կարճատև:

գ)առաքինություն.առաքինությունը արարքներում և կրքերում վնասակար երևույթներից խորշումն է.այն հոգու բարեկարգ ունակություն է, որով մարդ ըստ օրենքի է վարվում իր մտքերի, խոսքերի և գործերի մեջ, որոնք վերաբերում են կա՛մ Աստծուն, կա՛մ իրեն, կա՛մ ընկերոջը:

դ)կամեցողություն. կամեցողության հիմքը մարդասիրությունն է, որն էլ համապատասխանաբար կախված է սիրուց:

ե)գթասրտություն.գթասրտությամբ յուրաքանչյուր անհատ հնարավորություն է ունենում արտահայտել սեփական կարեկցանքն ու սերը դիմացինի նկատմամբ, այսկերպ հոգևոր երջանկություն պարգևելով ինքն իրեն և դիմացինի: Այստեղ իր նմանի հետ հարաբերվելիս բացառվում է անձնական որևէ շահ կամ ակնկալիք, ինչն էլ առողջ հարաբերությունների հիմքն է:

Ավարտին հասցնելով աշխատանքը հանգում եմ այն գաղափարին, որ բարոյական արժեքներ ունեցող ազնիվ մարդիկ հստակ հասկանում են՝ ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ: Նրանց վարվելակերպը պայմանավորված չէ պահի թելադրանքով, այլ հիմնված է հստակ սկզբունքների վրա, որոնք նրանց համար հանդիսանում են հուսալի ուղեցույց, և որոնց համաձայն նրանք վարվում են, անգամ երբ իրենց ոչ ոք չի տեսնում: Դպրոցներում ուսուցիչները այնքան վարպետորեն պետք է աշակերտների մեջ սերմանեն հատկապես ազգային բարոյական արժեքները, փորձեն սովորեցնել հայի անվախ կերպարը և միևնույն ժամանակ դա այնպես պետք է արվի,որպեսզի երեխայի մոտ չառաջանա կարծիք, որ ուսուցիչը իր

կամքն է թելադրում: Եվ վերջապես բարոյական հատկանիշներով օժտված անհատին խորթ է դիմացինին <<վնասելու>>միտքը: Վերլուծելով բոլոր ուսումնասիրությունները հարկ է նշել,որ մարդկային բարձր որակների ձևավորումը դժվարին ուղի է, որի սկզբում անհրաժեշտ է պարզաբանել և հասկանալ, թե

ա)որո՞նք են մեր սխալներն ու թերացումները

բ) ո՞ր առաքինությունների շուրջ է պետք միավորվել

գ)ինչպե՞ս ամրագրել չարիքի մերժումը

դ)ո՞րն է ապագայի հասարակության մեր մոդելը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բրուտյան Վ. Կրտսեր դպրոցականների դաստիարակության ժամանակակից խնդիրները
2. Ա.Աշիկյան Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը նոր սերնդի դաստիարակության գործում
3. Հայոց եկեղեցու պատմություն, ուսուցչի ձեռնարկ, 10-11-րդ դասարաններ
4. http://ter-hambardzum.net/